

ԻՐԱՒՈՒՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՔԱՌՈՒՄՆ

(Մալկաֆաղ դոկ. Երեմգի նոյնանուն փոքրիկ շաքարալիցի)։

Տաճկահայերի դառնադին վիճակը պարբերաբար մեր առաջ դնում է մարդկային կենաց կնճառոտ խնդիրներից մէկը — ի՞նչ է իրաւունքը, և ի՞նչ՝ անիրաւութիւնը։ Այսօր ևս մենք տեսնում ենք, որ մեր եղբայրակից տառապեալները ամէն կողմերից խրատներ են ստանում, թէ ի՞նչ իրաւունք ունին նրանք գործելու, և ի՞նչ՝ ոչ։ Որչափ որ բարեմտութեամբ լինին արտայայտած այն խրատները, այնու ամենայնիւ նրանց մէջ մերկանում են մեծամեծ հակասութիւններ, այնպէս որ մարդ շուարած է մնում, թէ ուրեմն ռոտեզ է ճշմարտութիւնը։ Հարց է ծագում, թէ ի՞նչ պէտք է անէ մարդս, երբ որ իր իրաւունքը թափ տակ է կոխոտվում։ Կտոհած չկայ, որ ամենալստահելի խորհուրդ կարող է տալ մեզ գիտութիւնը, և ուրեմն անժամանակ չէ, որ մենք էլ հետամուտ լինինք և նոյն գիտութեան մէջ փնտռենք մեր մտքերի սւղղացմունքների առողջ դարգացման հանգամանքները։ Արդ, ի՞նչ է վարդապետում գիտութիւնը իրաւունքի սրբութեան մասին։

1872 թուին դոկտ. Երինգը մի փոքր տետրակ հրատարակեց «Kampf um's Recht» վերնագրով, որ իսկոյն թարգմանուեց բազմաթիւ լեզուների, և որ մինչև այսօր համարվում է վերին աստիճանի կլասիկ գրուածք։ Այս խորիմաստ փոքրիկ երկասիրութիւնը այնչափ որտապինդ բողոքով է ներշնչուած ամենայն անիրաւութեան և անարդարութեան դէմ, որ ծայրէ ի ծայր վառ պահպանում է ընթերցողի գիտակցութեան մէջ կամքի, կորովի և տոկունութեան տենչը մարդկօրէն երջանիկ լինելու համար։

Թէպէտ յիշատակած տետրակը շատ պարզ է շարադրութեամբ, բայց սրովհետև այն առաւելապէս մասնագէտ իրաւաւորների համար է ձևացած քան հասարակ ընթերցողի համար, մենք աւելի բարւոք համարեցինք նոյնը այստեղ ներկայացնել ծաղկաքաղի կերպով, միջից հանելով աւելի վերացական և բուն մասնագիտական մանրամասնութիւնները, աշխատելով բովանդակութիւնը յարմարեցնել մեր հասարակ ընթերցողի համար։

Ով որ ինքն իրան դիտնի ճիճու է դարձնում, յիտոյ այլ
եւս չպէտք է զանգատուի, եթէ իրան ոտի տակ արորեն:
Կանգ.

«Իրաւունք» բառը թուում է, թէ շատ պարզ դադարւած
է արտայայտում, այն ինչ նա շատ բարդ է իր մանրամաս-
նութիւններով: Իսկ որպէսզի այդ բարդութիւնը զգալի
դառնայ մեզ համար և շուտ քմբռնենք, վեր առնենք մի բնո-
րոշ դէպք, մի կօնկրէտ իրողութիւն, որով «Իրաւունքը» մեր
առաջ կարողանայ շատ ու քիչ բազմակողմանի ձևերով հան-
դիսանալ: Հանրաժանօթ է Շէքսպիրի նկարագրած Շայլօկի
դատը Վենետիկի օրէնքով և Պօրցիայի միջամտութեամբ: Ահա
այդ դատը մենք կընտրենք որպէս սկզբնական այնուհետև
աւելի մանր բացատրութիւնների համար:

Հէնց որ Շայլօկը լսում է Անտօնիօի սնանկանայք, որ իր
սրտի փափագած բանն էր, խուճապով վազում է դատարան,
սարսափելի ոխը սրտում, անողոր մուրհակը ձեռին, որպէս զի
հաստատէ իր իրաւունքը և Անտօնիօի սրտի կշտից մի ֆունտ
միս կտրելու անդառնալի վճիռը ստանայ: Բայց արդեօք ունի՞
նա մի այդպիսի իրաւունք. օ՛, Վենետիկում ոչ որ չի կասկա-
ծում մուրհակի իսկութեան և զօրութեան մասին.— ինքը Ան-
տօնիօն, դօժը (գուրքը), դատարանը, ամէնքը միաբերան
վկայում են, որ օրէնքով իրաւունքը հրէի կողմն է: Ահա նրանց
վկայութիւնները.

Անտօնիօ. «Դուքը չի կարող օրէնք լուծել», Դուք.
«Շատ տխրում եմ ես քո բախտիդ մասին». Անտօնիօ. «...օրի-
նական միջոց չկայ ինձ նրա ոխից փրկելու համար...»
Պօրցիա. «Անկարող ե Վենետիկեան օրէնք արդելք լինել
մեզ: Անկարելի է, չկայ Վենետիկում ոչ մի գօրութիւն, որ
կարողանայ օրէնք լուծել... Օրէնքով հրէան այս թղթով
իրաւունք ունի կտրել մի ֆունտ միս. դատարանն այդքան
քիչ է յատկացնում եւ օրէնք քիչ թողատրում է այդ»:
(բարգմ. Յով. Խ. Մասեհեանի):

Ահա այսօրինակ հաստատ համոզմամբ Շայլօկը դիմում է
դատաստանին, և «Իմաստուն Դանիէլը», որ սկզբում ճգնեց
վրէժխնդիր հրէայի գութը շարժել, որպէս զի սա կամովին
հրաժարուի իր իրաւունքից, վերջապէս ճանաչում և խոստո-
ւանում է, թէ այն իրաւունքը անկապտելի է: Արեւնծարաւ
Շայլօկի ուրախութեան չափ չկայ: Իսկ թատրոնի հանդիսա-

կանները սրտաբեկում և ճնշվում են, որ այսչափ զարհուրելի անգթութիւնը յաղթութիւն է ստանում: Սահայն Պօրցիան մարդասիրական մեծ զգացումով համակուած և աւելի ևս մեծ սրամտութեամբ զինուած՝ արդարագատութեան նժարը ծռում է հակառակ կողմը այն բացատրութեամբ, թէ Շայլօկը միտք կտրելիս ոչ արեւն պէտք է թափէ և ոչ մի ֆունտից պահաս կամ աւելի կտոր դուրս կտրէ: Եւ ահա թատրոնի հանդիսականները լիովին դոհանում են, որ վերջ է վերջոյ մարդասիրութիւնն է վրաւաւորվում:

Սահայն դժուած չէ համոզուել, որ այս դէպքում մի խորամանկութիւն և անարդարութիւն է տեղ դրել:

Եւ երբ որ Շայլօկը դատարանից դուրս է գնում մէջքը ծռած, գլխակոր, արիւնքամ սրտով, նոյն իսկ հանդիսականները ոչ ապաքէն մեղքանում են նրան, կարծես զգալով, թէ նա մի ինչ որ անարդարութեան է հանդիպել. բայց նրանք այլ ևս մանրամասնութիւնները չեն ուզում քննել, որովհետեւ իրանց բոլոր համակրութիւններով արդէն Անտոնիօի կողմն են հակուել: Իսկ ինչ էր անարդարութիւնը: Այն, որ Շայլօկի մուրհակը Վենետիկ օրէնքում և դուքսի դատավճռով օրինաւոր հանաչուեց. բայց գործադրութեան ժամանակ պատրուակներ հնարեցին նոյն մուրհակը անզօրացնելու համար, և ուրեմն մի ձեռքով կնքուած դատավճիռը իսկոյն միւս ձեռքով քանդուեց: Արդարագատութեան սխալ քայլը ակներև է. մուրհակը ինքնին արդէն մի ոչնչութիւն էր, որովհետեւ մէջք մի անբարոյական հանգամանք էր պարունակում. դատաւորն, ուրեմն, այդ պատճառով պարտաւոր էր հեկնց սկզբից մուրհակը մերժել և բանը չհասցնել տալ գործադրութեան: Իսկ եթէ նա այդ չարեց, եթէ «իմաստուն Դանիէլը» այնուամենայնիւ մուրհակի զօրութիւնը չխախտեց, ապա ուրեմն լուի մի անարժան հնարագիտութիւն և ճարպիկութիւն էր մերժել արդարութիւնը այն մարդուն, որին արդէն իրաւունք էր յատկացրել, թէ կարող է կենդանի մտից մի ֆունտ կտրել: Եւ յերաւի, միթէ պատրուակ չէր—միտք կտրելու իրաւունք տալ, բայց արդեւել արեւն թափել և մի ֆունտից պահաս կտրել: Ո՞րտեղ է տեսնուած կտրած կենդանի միտք առանց արեան և թր օրէնքը կարող է արդեւել պակաս կշռով միս կտրել, եթէ տէրը այդքանով էլ դոհանում է: Տարակոյս չկայ, որ սրանք լուի պատրուակներ էին, որոնք խափանեցին դատավճռի գործադրութիւնը: Պորցիան իր մարդասիրութիւնը դնեց անարդար միջոցով: Կամ ընդունենք արդեօք, թէ նպատակը միջոցներ է արդարացնում:

Այս բոլոր ասածներէից այն է հետեւում, թէ որպէս զի վե-
նետիկեցիք արդարութիւն վայելէին, նախ և առաջ պէտք է ի-
րանց անմիտ օրէնքները լաւացնէին: Այն ժամանակ Շայխօհները
դատարան չէին գնաց իրանց անդուլթ մուրհակներով վճիռ
խնդրելու: Տգէտ հրէան ինչ անէ, որ Վենետիկի օրէնքով խրա-
խուսուեց անբարոյական մուրհակ կորզել անհեռառես մար-
դուց:

Հանդիսատեսը կարծում է, որ դատարանից հեռացող
Շայխօհը միայն այն ցաւն է իր հետ դուրս տանում, թէ մի
փունտ միւս չկարողացաւ ստանալ: Ո՛չ, նա ոչ միայն իր դատը
կորցրեց, այլ ինչ հաւատով որ ներս էր մտել դատարանը,
այն հաւատը կորցրած դուրս գնաց: Արդարեւ նրա վիճակը
չաւ աւելի եղիկելի է, քան կարծում ենք: Նա հաւատում էր,
թէ կայ օրէնք անխափր բոլոր քաղաքացիներէ համար. այդ
օրէնքի համաձայն մի մուրհակ է ձեռք բերում. մուրհակը օ-
րինաւոր է ճանաչվում. բայց վերջը ծաղրվում է և լսում է,
որ մուրհակի գործադրութիւնը իրան տրդելվում է: Հաւա-
տով եկել էր, հաւատը կորցրած է դուրս գնում: Արդարու-
թիւնը արդարութիւն պիտի մնայ, եթէ արդարութեան զի-
մողը նոյն իսկ անձնական շահի տեսակէտից դրդուած արդա-
րութիւն է փնտռում: Բայց արդարութիւնը ամէնի համար
կայ, միայն հրէան չի գտնում այն: Ահա Շայխօհի մտմտուքը:
Ճշմարիտ է, նա անարգ ռիազալութեամբ էր մտել դատարանը,
բայց այժմ լսեցէք այն բառերը, որով Շէքսպիրը նրան խօ-
սեցնել է տալիս. դուք նրա բերանից այնպիսի ճշմարտութիւն
էք լսում, ինչպէս ամենայն մարդուց կարող էիք լսել: Այդ
այն լեզուն է, որով խօսում է վիրաւորած արդարութեան
դպացումը ամէն տեղ և ամէն ժամանակ: Չմոռանանք, որ
Շայխօհը, թէպէտ վաշխառու հրէայ, բայց այս դէպքում նրան
չի հրապուրել դրամը. նրան Բաստանիօն եռապատիկ աւելի
է առաջարկում, քան պարտքն էր, բայց վաշխառուն այդ
բանից հրաժարվում է և միայն իր վիրաւորած անճանաչութեան
վայրենի վրէժն է պահանջում, նրա լեզուի զօրութիւնը բըղ-
խում է այն հանդամանքից, որ նա անդրդուելի համոզում
ունի, թէ իրաւունքը՝ չնայելով ոչ մի բանին՝ իրաւունք պէտք
է ճանաչուի. նրա մէջ կենդանութիւն է ստանում մտածման
և զգացման բոլոր կորովը, և բոլոր ուժով հասնում է այն
զիտակցութեան, թէ իր դատով ինքը հանդէս է մտնում ոչ
միայն յանուն անբռնաբարելի օրէնքի: Տեսէք, թէ Շէքսպիրը
ինչպէս է խօսեցնել տալիս մի ֆունտ մսի համար.

«Ա՛յն մի ֆուհտ միտք որ պահանջում եմ՝
 Շատ Թանգ եմ գնել, ինձ է պատկանում,
 եւ պէտք է տունեմ: Եթէ մերժէր ինձ՝
 Թուհի մեր օրէնքին. ապա Վենետիկ
 Հրովարտականքում զօրութիւն չկայ»:

— Ես պահանջում եմ արդար դատաստան,

— Պնդում եմ այստեղ մուրհակիս վրայ:

«Պահանջում եմ արդար դատաստան»: Բանաստեղծը այս
 Յրաւով արտայայտում է իրաւունքի մաքաւման նշանակութիւնը
 աւելի լաւ, քան որ և է իրաւաբան կարող էր նոյնը ձեւակեր-
 պել: Այս խօսքով ամբողջ գործը նոր կերպարանք է ստանում
 և Շայլօկի դատը արդէն ինքնին Վենետիկ արդարադատութեան
 խնդիր է դառնում: Որքան մեծանում, վսեմանում է
 այս վաշխառուի դէմքը, երբ որ սա այս խօսքերն է արտա-
 րանում: Սա այլ ևս այն արեւնծարաւ հրէան չէ, որ իր մի
 ֆուհտ միտն է պահանջում, այլ—նոյն ինքն Վենետիկ ինքն-
 իշխան օրէնքը, որ դատաստանի դուռն է բաղխում. որով-
 հետեւ իր իրաւունքը և Վենետիկ արդարադատութիւնը—միև-
 նոյն են. եթէ խախտուի իր իրաւունքը, կը խախտուի և Վենետիկ
 արդարադատութեան վարկը: Եւ երբ որ նա դատավճռի ծան-
 րութեան տակը ճնշուած՝ խոնարհում է և դողդոջուն ոտքե-
 րով դատարանից հեռանում, անգութ ծիծաղներով հալած-
 ուած, ո՞վ կարող է զերծ մնալ այն զգացումից, թէ նրա հետ
 նսեմացաւ նոյն ինքն Վենետիկ արդարադատութիւնը, թէ
 հանգիսից ամօթով հեռանում է ոչ թէ Շայլօկ հրէան, այլ
 միջնադարեան մշտահալած հրէաներից մէկը, այն իրաւազուրկ
 պարիան, որ ոչ մի տեղ արդարութիւն չի գտնում:

ԻՐԱՒՈՒՆՔԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ. Այժմ անցնենք մեր խնդրի ման-
 րամասնութիւններին:

Հարարաւոր մարդկանց կեանքը այնպէս անխռով և ան-
 արգել է անցնում, որ նրանք կարծում են, իբրեւ թէ իրաւունքը
 ոչ այլ ինչ է, քայց եթէ սոսկ խաղաղութեան և հանգիստ
 կարգ ու կանոնի վիճակ: Փորձեցէք նրանց ասել, թէ իրա-
 ւունքը անդադար մաքառում, կռիւ և պատերազմ է, նրանք
 չեն հաւատալ: Եւ նրանք՝ իրանց տեսակէտից՝ ուղիղ են խոր-
 հում, որովհետեւ իրանց կեանքը ոչնչով չի աղմուկում: Այսպէս
 հարուստ ժառանգը՝ որ առանց որ և է անձնական ջանքի՝
 ստացել է ուրիշի աշխատութեան պատուները, կսկօժ ժխտել

այն իրողութիւնը, թէ սեպհականութիւնը աշխատութիւն է: Այս մոլորութիւնը ծագում է այն հանգամանքից, որ այն երկու կողմերը, որոնք սեպհականութեան և իրաւունքի եւրեւոյթներն ընդթիւնն են կազմում, շատ անգամ կրող անձինքների մէջ այնպէս ջոկ ջոկ անջատուած են լինում, որ նոյն անձինքներից ոմանք հէնց միայն քաղցր և խաղաղ կեանք են վայելում, իսկ ոմանք ստիպւում են օրնիրուն դառնութեամբ աշխատել և մաքառել:

Այս կողմից ազդերն էլ անհատներն պէս են: Մի ազդի կեանքը պատերազմ է, միւսի կեանքը՝ խաղաղութիւն: Այն ազդը, որ երկար ժամանակ խաղաղութիւն է վայելում, հետզհետէ սկսում է կարծել, թէ խաղաղութիւնը յաւիտենական վիճակ է, մինչև որ թնդանօթի առաջին պայթումը չփարատէ իր գեղեցիկ երազը: Խաղաղութիւն վայելող սերնդին յետոյ փոխարինում է մի ուրիշ սերունդ, որ ստիպւում է պատերազմով վերստին խաղաղութիւնը վերականգնել: Միով բանիւ — խաղաղութիւնը առանց մաքառման, վայելումը առանց աշխատութեան թերևս եղեմական օրերումն է եղել: Իսկ պատմական ժամանակներում նրանք առանց սրի և քրտինքի չեն արտաքրվում:

Այո՛, իրաւունքի նպատակը խաղաղութիւնն է, քայց այս բանն միջոցը մաքառումն: Քանի որ իրաւունքը հաւածանք կը կրէ անիրաւութիւնից, — իսկ այսպիսի վիճակը պիտի տևէ մինչև աշխարհի վերջը, — նա երբէք չի ազատուի մաքառման հարկից: Իրաւունքի կեանքը մաքառումն է, մաքառում՝ ազդերի, պետութիւնների, դասակարգերի, անհատների մէջ:

Աշխարհի մէջ ամէն մի իրաւունք մաքառման արդիւնք է, իւրաքանչիւր նշանաւոր իրաւական վիճակը նախ պէտք է իրան ընդդիմադրող վիճակները յաղթէ, և ամէն պարագայի մէջ միշտ պատրաստ գտնուի ինքնապաշտպանութեան համար: Իրաւունքը լոկ միայն գաղափար չէ, այլ և կենդանի զօրութիւն, կենդանի դործ է: Այս պատճառով արդարադատութիւնը, որ մի ձեռքով բռնած ունի կշեռքը՝ իրաւունքը կըշռելու համար, միւս ձեռքում ունի սուր՝ իրաւունքը հաստատելու համար: Սուրն առանց կշեռքի բռնութիւն է, կշեռքն առանց սրի իրաւունքի անզօրութիւն է: Կատարեալ իրաւակարգ կիշխէ այնտեղ, ուր որ այն զօրութիւնը, որով սուր է բռնում արդարադատութիւնը, հաւասար կը լինի այն ճշմարտութեան, որով նա կշեռքն է բանեցնում:

«Իրաւունք» բառը գործ էածվում կրկնակի մտքով. այլ է անձնակամ և այլ հասարակաց իրաւունքը: Երբ որ Շայլօկը

իր մուրհակի հաստատութիւնն է պահանջում, նա հետամուտ է իր անձնական, սուբեկտիւ, կօնկրէտ իրաւունքի, իսկ երբ որ նա կոչ է անում Վենետիկ օրէնքին, նա բարձրանում և կանգնում է հասարակաց, օբեկտիւ, աբստրակտ տեսակէտի վրայ:

Կեանքի մէջ երկու ուղղութեամբ էլ իրաւունքը ընդդիմութեան է հանդիպում, ուրեմն երկու ուղղութեամբ էլ նա պէտք է մաքառէ, որպէս զի ասպահովէ իր գոյութիւնը: Ոմանք կարծում են, որ իրաւունքը ինքնին ծագում է, ինչպէս որ ծաղիկը դաշտում ինքնին աննկատելի կերպով բոսում և հասունանում է: Իսկ մենք յայտնի տեսնում ենք, որ իրաւունքի համար ազգերը կռւում են ազգերի դէմ, պետութիւնները հպատակները դէմ, անհասները միմեանց դէմ: Այն ամենայն դէպքերում, ուր որ տիրող իրաւունք մարդկանց շահերով է պնդացած, նոր իրաւունքը հարկադրւում է մաքառմամբ ճամբայ բանալ, մաքառմամբ՝ որ երբեմն դարեր է տևում: Իրաւունքի պատմութեան մէջ բոլոր մեծամեծ յառաջադիմութիւնները — ստրկութեան ջնջումը, ճորտութեան տապալումը, հողատիրութեան, արհեստների, կրօնական ազատութիւնը և այլն — այս բոլորը ձեռք են բերուել խոտադոյն մաքառումներով, արեան ճապաղիներով, և միշտ՝ խորտակելով հին հին իրաւունքների ամրութիւնները: Ուրեմն իրաւունքը իր պատմական ընթացքում մեր առաջ բաց է անում հետապնդութեան, ճգունքի, մաքառման, միով բանիւ բոլոր ոյժերի լարման չարաչար տեսարան: Ասում են, թէ մարդկութեան նախնին ժամանակներում այդպիսի լարումն ու հալածարար շփումները չէին կարող լինել: Իբրև թէ այն ժամանակի մարդիկ զարդարուած են եղել հրեշտակային բոլոր յատկութիւններով — ճշմարտախօսութեամբ, մանկական միամտութեամբ, մաքուր սրտով, և թէ այդպիսի հիմքերի վրայ իրաւունքը կը ծաղկէր առանց որ և է շարժիչ կամ բռնադատող զօրութեան, այլ միայն համոզկերութեամբ և իրաւախոհութեամբ: այն ժամանակի բռունցքի կամ սրի կարիք չէր լինի: Բայց այժմ մենք գիտենք, որ այն նախնական անմեղութիւնը վայելէ է հէնց հակառակի պէս իր կոպտութեամբ, անդթութեամբ, դադանութեամբ, ժանտութեամբ, նենդութեամբ ու խորամանկութեամբ, և ուրեմն այն կարծիքը, իբրև թէ այն ժամանակներում իրաւունքը աւելի հեշտ էր հաստատուում մարդկանց բարքերի մէջ, քան այժմ, — բացէիբաց մերժելի է: Սակայն թողնենք նախնական ժամանակները, մեր աչքով տեսնում ենք, որ այժմ, մեր ժամանակներում՝ իրաւունքը այնպէս ծանր երկունքով է ծնւում, ինչպէս որ դաւաղը մօրից: Եւ

ինչպէս որ մայրը իր զաւակին պաշտպանում է ամէն պատահարներէն իր մայրական ընազդի բոլոր ուժով, այնպէս էլ ժամանակակից մարդը պինդ կանգնած է իր իրաւունքներէ համար իր բոլոր ունեցած բարոյական և նիւթական միջոցներով:

Արդեօք ամսոսանք, որ աշխարհի կարգերը այսպէս են: Հէնց այն հանգամանքը, որ ազգերը իրանց իրաւունքները առանց երկունքների չեն ստանում, թէ նրանք ստիպւում են լարել իրենց ոյժերը, վիճել, մաքառել և արելն թափել, հէնց այն հանգամանքով նրանք այնպէս պինդ են կառչում իրանց իրաւունքներին, ինչպէս ծնողը իր զաւակին: Մի ազգ այնքան աւելի հաւատարիմ կըլինի իր իրաւունքին, որքան որ աւելի կորով է թափել այն ձեռք բերելու համար: Ոչ թէ հասարակ անազմուկ սովորութիւնը. այլ անձնուէր զոհաբերութիւնն է կռում կոփում այն հաստատագոյն շղթան, որով ազգերը կապւում են իրանց իրաւունքների հետ: Այս մտքով մենք պէտք է ասենք, թէ այն մաքառումը, որ պահանջւում է իրաւունքի ծննդեան համար, ոչ թէ անէծք է, այլ օրհնութիւն:

ԱՆՁՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ, իՐ ՊԱՏԻԻԸ. ե՞րբ է ծագում (անձնական կամ հասարակաց) իրաւունքի համար մաքառումը: Երբ որ ունեցած իրաւունքը խախտւում կամ յափշտակւում է հակառակ կողմից: Ոչ մի իրաւունք՝ ոչ անհատների և ոչ ազգերի իրաւունքը՝ զերծ չէ այս վտանգից. և ուրեմն մաքառումը անխուսափելի է թէ մասնաւոր մարդու, թէ պետական և միջազգային կեանքում: Ազգերի պատերազմները, ժողովուրդների խռովութիւնը, սահմանադրութիւնների խախտումը, ինչի կամայական դատաստանը, միջին դարերի բռնունքի իրաւունքը կամ այդ ժամանակներից բղիթած և մեզ հասած մենամարտութիւնը, և վերջապէս այժմեան աւելի խաղաղ և կանոնաւոր քաղաքական դատաստանը—որանք ամէնքը ոչ այլ ինչ են, բայց եթէ իրաւունքի համար մաքառման զանազան ձևեր: Այս բոլոր դէպքերում, երբ որ խնդիրը խոշոր բարեքների և խոշոր զոհաբերութիւնների է վերաբերում, նոյն իսկ բթամիտ մարդը մաքառելու ստիպողականութիւնը կըմբռնէ և էլ տարակուսած չի հարցնի, թէ ինչ կարիք կայ կռուելու, աւելի լաւ չէ՞ խոնարհել և զիջել: Բայց մեր քաղաքական դատը երբեմն իմն ու քոյի այնպիսի չնչին շահերի հանդէս է բաց անում, որ թուում է, թէ աւելի լաւ կը

լինէր, եթէ մարդիկ այդպիսի դատարկ բաներով չզբաղուէին: Այս պատճառով ամենայն մարդ, երբ որ իր իրաւունքը խախտուած է տեսնում, նախ և առաջ աշխատում է ինքն իրան հաշիւ տալ, արդեօք պէտք է պաշտպանել այն իրաւունքը, ընդդիմադրել հակառակորդին, և ուրեմն մաքառել, թէ կռուի անկամութիւններէն զերծ մնալու համար՝ աւելի բարւոք է հարուածը անմուռնջ տանել: Եւ ինչ վճիռ էլ որ դրուի, երկու դէպքումն էլ զոհարեցութիւն պիտի առաջ գայ. մի դէպքում իրաւունքը կը զոհուի խաղաղութեան, միւս դէպքում խաղաղութիւնը՝ իրաւունքին: Ուրեմն խնդիրն այն է, թէ այս զոհերից մին աւելի տանելի կը լինի անձնաւորութեան համար: Հարուստը ի սէր խաղաղութեան չի դժուարանայ զոհել իր համար մի առանձին դին չունեցող առարկան, իսկ աղքատը՝ որի աջքում այն առարկան տւելի արժէքաւոր է դառնում՝ կը զոհէ նրա համար իր խաղաղութիւնը: Այս կերպով, թուում է, թէ իրաւունքի համար մաքառման խնդիրը՝ պարզ թուաբանական հաշիւ է դառնում, ուր բաւական է թեր ու գէմի օգուտն ու վնասը կշռել, որպէս զի վերջնական վճիռը օտայնութիւն:

Բայց թէ խօսութեամբ բանն այդպէս չէ, այդ գիտէ ամենայն ոք: Ամենօրեայ փորձը մեր առաջն է գնում այնպիսի դոտեր, որ վիճելի առարկայի արժէքը երբէք չի կարող համապատասխանել այն բոլոր քանքերի, նեղութիւնների, միջոցների ծախսին, որ կանխաւ գուշակւում է դատը յաջողեցնելու համար: Զրհորի մէջ ընկած մի մանէթի համար՝ ոչ ոք երկու մանէթ չի ծախսի, որպէս զի ընկածը վեր հանել տայ, այս դէպքում մարդս առաջնորդւում է պարզ թուաբանական հաշուով: Հասկանա ինչո՞ւ նոյնպիսի թուաբանական հաշիւ չի բռնում իրան քուն շտուգող մի ջնջին դատի համար: Նոյն իսկ եթէ նա գիտենայ, որ անշուշտ դատը պիտի կորցնի, նա դարձեալ իր փոստաբանին պնդում է. «Ես անդառնալի կերպով վճռել եմ դատի շարունակել, ինչ դնով էլ որ լինի»:

Ինչպէս բացատրենք՝ հաշուի տեսակէտից՝ այս անխորհուրդ գործը:

Յայտնի է, թէ այդպիսի դէպքերի համար ինչ պատահականներ են լսւում,—թէ ողորմելի մարդը զրախնդիր է, չընչնախճբիծ է, դատամոլ է, կռուատէր է, վիճելու համար մեռած է, սրտի հաւաքած կողմնակի դառնութիւնը առաջին պատահած հակառակորդի գլխին թափելու ընդունակ է, գիտենալով հանդերձ, որ վէճը իրան էժան չի նստի և գուցէ

աւելի էլ տուփէ, քան իր հակառակորդը:

Առ ժամանակ թողնենք երկու մասնաւոր անձինքներն զէճը և նրանց յիշխարէն զեր առնենք երկու ազգեր: Սրանցից մէկը անիրաւութեամբ միւսից յափշտակուած է մի քառակուսի վերստ անապատ՝ ոչ մի արժէք չունեցող հողը. արդեօք այս միւս ազգը պէտք է սկսէ պատերազմել: Փորձեցէք այս խնդիրը չափել ճիշդ այն չափով, որ չափով որ մի խօսքի իւրաքանչիւր չափում է իր դէպքը, երբ որ իրանից անիրաւ դրացին մի քանի ոտնաչափ հողի կտոր է դաւթում և վարում, կամ իր արտում նա քարերի կոյտեր է շարտում: Ի՞նչ մի մեծ քան է մի վերստ քառակուսի անապատ տեղը համեմատութեամբ պատերազմի, որ հաղարաւոր կեանքեր է զոհում, ազէտ և աղքատութիւն է պատճառում խրճիթներին և պալատներին, պետական միջոցներից միլիոններ և միլիարդներ է կուլ տալիս, թերևս նոյն իսկ պետութեան գոյութեան է սպառնում: Ի՞նչ յիմարութիւն է այսչափ զոհեր զոհել մաքառման այնքան չնչին արդասիքի համար:

Այսպէս պետի լինէր վճեռը, եթէ երկրագործն ու ազգը մի և նոյն չափով չափուէին: Սակայն անկարելի է ազգի կրօնն ու երկրագործի կրօնը մի և նոյն չափով չափել: Ամենայն ոք զգում է, որ այն ազգը իր մահու դատարկութիւնը կը կարդայ, եթէ լռութեամբ պատասխանէ իր իրաւունքները խախտողին: Մի ազգ, որ իր հողերից դրացուն թոյլ է տալիս անապատի կերպով յափշտակել մի քառակուսի վերստ, հետզհետէ կը զրկուի նաև մնացած հողերից, մինչև որ իսպառ դադարէ պետութիւն կոչուելուց. և այդպիսի ազգը արժանի էլ չէ լաւադոյն բախտի:

Իսկ եթէ ազգը պէտք է պաշտպանուի մի քառակուսի վերստի տարածութեան համար, ինչո՞ւ երկրագործն էլ նոյնը չանէ մի կտոր հողի համար: Սակայն եթէ ազգը կռւում է իսկապէս ոչ թէ մի վերստ տարածութեան՝ այլ իր պատուի և անկախութեան համար, այսպէս էլ քաղաքական դատում՝ ուր որ դանդաղաւորը ստիպւում է իր անձը պաշտպանել իր իրաւունքները ոտնակոխ անողից, միւսուսկան անարգութիւնից, կամ անասնոց լրբութիւնից, այնտեղ ուրեմն խնդիրը ոչ թէ վիճելի չնչին առարկան է, այլ մի բարձրագոյն իդէալական հպատակ, այսինքն՝ նոյն իսկ վտանգուած բարոյական անձնաւորութեան և իրաւազգացման վերահաստատութիւնը: Այսպիսի նպատակի առաջ ոչինչ են դառնում ամէն տեսակ զոհողութիւնները և անախորժութիւնները—նպատակը վճարում է միջոցների գինը: Ոչ թէ դրամական շահն է զրգում վերաւո-

բաժին, որ դատ բանայ, այլ կրած անարդարութեան կսկիծը: Մի ինչ որ ներքին ձայն ասում է նրան, որ չնահանջէ նա, որ այդ գործում իր շահը ոչ թէ անարժէք առարկան է, այլ իր անձնաւորութեան նկարագիրը, իր պատիւը, իր իրաւազօգուծը, ինքնարդութիւնը:

Այնուամենայնիւ փորձով դիտենք, որ շատ մարդիկ այլապէս են մտածում, նրանց համար խաղաղութիւնը աւելի թանգ է, քան պաշտպանած իրաւունքը: Միթէ մենք պէտք է հանգստանանք այն մտքով, թէ այսպիսի գործերը ճաշակի և խառնուածքի գործեր են, թէ մէկը աւելի անհաշտ է, իսկ միւսը՝ խաղաղասէր: Այս կարծիքը անընդունելի է, որովհետեւ հիմնովին հակասում է իրաւունքի խորածածուկ էութեան: Այս բանը շատերի համար մութ է: Նթէ որ և է հասարակութեան մէջ այդ սկզբունքը ընդհանրանայ, այնուհետեւ այդտեղ իրաւակարգը բոլորովին կը կործանուի, որովհետեւ մինչդեռ պահանջվում է, որ իրաւունքը՝ անիրաւութեան ընդդիմադրելու համար՝ պէտք է արիութիւն և քաջութիւն ունենայ,—այդ կարծիքն ընդհակառակ քարոզում է բարոյական վտանգից փոքրոգի փախուստ: Աշխարհը լիքն է չարաչար անկարգութիւններով. հետեւապէս յանդգնամիտ անիրաւութեան դէմ, որքութիւն անարդողի դէմ, չարամտութեամբ վիրաւորողի դէմ մաքառումը մարդկային պարսկալոցիւն է: Եւ մենք պէտք է այժմ քննենք և համոզուենք, որ այդպիսի պարտականութիւն ունենք թէ մեր սեպհակուն անձի նկատմամբ, և թէ հասարակութեան վերաբերութեամբ:

ԻՐԱՆԻՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՔԱՌՈՒՄԸ ՄԱՐԴՈՒ ՊԱՐՏԵՆ Է ԴԷՊԻ ԻՐ ԱՆՁԸ. Սեպհական գոյութեան պահպանումը ընտելեան օրէնք է ամենուրեք: Մարդս էլ ամէն միջոց գործ է դնում պահպանել ոչ միայն իր ֆիզիքական՝ այլ և բարոյական գոյութիւնը, իսկ վերջին պարագայի դիտաւոր պայմաններից մէկն է իրաւունքի պահպանութիւնը: Իրաւունքով մարդս արտայայտում և պահպանում է իր բարոյական կեանքը, առանց իրաւունքի նախընտրելի անասնութեան աստիճանին: Միտել Կօլհաադը, որի մասին յետոյ խօսք կը լինի, մի անգամ ասել է. «Եթէ ինձ վիճակուել է ոտնադնուի լինելու, այն ժամանակ մնում է, որ ես շուն լինիմ, և ոչ թէ մորդ»: Հետեւապէս իրաւունքներ ի պահպանութիւնը դառնում է բարոյական ինքնապահպանութեան պարտք, իսկ նրանցից հրաժարումը՝ բարոյական ինքնասպանութիւն:

Անպահականութիւնը, ամուսնութիւնը, դաշինք կռելը, պատիւը և այլն, սրանք ամէնքը դատ դատ իրաւունքներ են ծնանում մեզ համար, և դրանցից որ և է մէկից հրաժարուիլը նոյնպէս անհնարին է, ինչպէս և առհասարակ իրաւական ամբողջութիւնից: Բայց եթէ մենք ինքներս անձամբ չենք հրաժարւում այդ բաներից, օտարները կարող են յարձակում գործել մեր իրաւունքներից մէկի կամ միւսի վրայ, և ահա այդպիսի յարձակումների դիմադրութիւնը դառնում է մարդուս պարտականութիւն: Մի կողմի քմահաճութեան դէմ միշտ պատրաստ պիտի լինի միւս կողմի ինքնապաշտպանութիւնը:

Սակայն ոչ ամենայն ապօրինութիւն քմահաճոյք է, այսինքն՝ միշտ չար դիտաւորութիւն չէ «իրաւունք» գաղափարի դէմ: Եթէ մէկը ինձ պատականոզ իրը անգիտակցաբար դնում է գողից, նա իրան կարծում է սեպհականատէր, այն ինչ իսկական տէրը ես եմ. նա ուրեմն՝ ինձ հետ վիճելիս՝ ոչ թէ մերժում է սեպհականութեան գաղափարը, այլ ընդհակառակ ինքն էլ ինձ հետ վիճում է հէնց նոյն սեպհականութեան անունով: Եթէ մէկը ինձ աշխատեցնել է տալիս, բայց զանազան պատրուակներով խուսափում է վարձատրութիւն տալուց, նա ոչ այլ ինչ է, բայց եթէ իմ աշխատութեան պտուղը գողացող: Միայն գողն ու աւաղակը չեն ճանաչում սեպհականութեան գաղափարը, ուրեմն և իմ անձնաւորութեան էական պայմանը: Այսպիսի դէպքերում եթէ ես իմ սեպհականութիւնն եմ պաշտպանում և չեմ հրաժարւում նրանից, ես առաւելապէս պաշտպանում եմ իմ բարոյական գոյութիւնը, որ վտանգի է ենթարկւում: Բայց միթէ մաքառումը միշտ ծայրայեղութեան պիտի հասնի: Անշուշտ ոչ. երբեմն մարդուս մէջ տարբեր պարտականութիւններ են քնդհարւում, ուր մէկի պատճառով միւսը տեղի պիտի տայ: Չոր օր. երբ որ սեպհականութիւն պաշտպանելու պարտականութիւնը ընդհարւում է կեանքը պահպանելու աւելի բարձրագոյն պարտականութեան հետ, այսպէս եթէ աւաղակը իր զոհին ստիպում է կեանքի և քոսակի մէջ ընտրութիւն անել, — անշուշտ սեպհականութիւնից հրաժարուիլը ներելի է: Բացի այսպիսի ընդհարման դէպքերից, իւրաքանչիւրի պարտականութիւն է՝ իր ձեռքին ունեցած բոլոր միջոցներով միշտ դէմ կենալ իր իրաւունքի սրբապղծութեան. ով որ համբերութեամբ տանում է իրաւունքի զեղծումը, նա ինքն իրան ընտելացնում է իրաւագրկութեան: Իսկ այս բանին չպէտք է համաձայնի: Ընթերցողը չպէտք է մոռանայ, որ այստեղ չի բարոյւում իրաւունքի համար մաքու-

ոռւմք յամենայն դէպոս: Միմիայն այն դէպքում, ուր որ ինքր անձը ոտնատակ է լինում իր իրաւունքի մէջ, մարդս բարոյապէս պարտական է պաշտպանուել, իր պատուի նախանձախնդիր լինել և իրաւունքը վերահաստատելու ձգտել: Այս խօսքից պարզ է, որ անիրաւ տեղ քաշըշելը, դատախօսութիւնը, դատաւիտութիւնը, բանդաւթութիւնը առաքինութիւն և դեղեցիկ բան չի համարուի: Մենք չպէտք է մոռանանք, որ կան դէպքեր, ուր որ հաշտութիւնը առաջին պարտականութիւն է: Եթէ իմ սեպհականութիւնը օտարը ստացել է բարեխղճութեամբ և անդիտութեամբ, նա այստեղ իմ իրաւազդացումը, իմ անձնաւորութիւնը, իմ արժանապատուութիւնը չի խախտել, որովհետեւ չարամտութիւն չկայ մէջ տեղը: Խարդախը իր անիրաւութիւններէ համար պատասխանատու է որպէս գող, բայց ոչ այն ժառանգը, որ միամտութեամբ և օրէնքով ժառանգել է խարդախի ստացուածքները: Որքան որ խարդախից զրկանքներ կրած լինիմ, այնուամենայնիւ նրա ժառանգի և իմ մէջ միայն դուռ նիւթական շահի խնդիր կարող է ծագել. այստեղ ի հաշիւ պէտք է առնուի միայն առարկայի արժէքը, և ոչ թէ մարդու չարամտութիւնը: Այս դէպքում ես կատարեալ իրաւունք ունիմ նախ կշռել երկու հնարաւոր ելքը, օգուտն ու վնասը, և այնպէս վճռել, արդեօք սկսե՞մ դատը, հրաժարուե՞մ դատից, կամ թէ բանը հաշտութեամբ վերջացնեմ: Ուրեմն հաշտութիւնը և ծայրայեղ մաքառումը կախուած է այն հանգամանքից, արդեօք մէջ տեղը լոկ նիւթական շահն է վտանգուած, թէ մարդուս իրաւազդացումն է վերաւորած:

Իսկ թէ մարդս սրտեղ է տեսնում հակառակորդի մտաց չարութիւնը, կամ թէ ինչ դէպքում նա իրան վերաւորած է համարում, այս էլ կախուած է իր կրթութիւնից և կեանքի վիճակից: Ամենից աւելի կռուարար և իրաւախօս է համարւում շինականը, որ հասկանալի է երկու պատճառով. նախ՝ նրա մէջ սաստիկ զարգացած է սեպհականութեան զգացումը՝ եթէ չասենք ագահութիւնը, երկրորդ՝ նա ամէնի մէջ և ամէն պարագայում կասկածում է չարամտութիւն: Ոչ ոք այնպէս լաւ չի գնահատում իր շահը և այնպէս պինդ չի պահում իր ստացուածքը, քան շինականը, բայց և այնպէս ոչ ոք այնպէս հեշտութեամբ չի զոհում իր կարողութիւնն ու ինչքը դատի համար, քան նա: Վարժեո թէ այս տեղ մի հակառակութիւն կայ, բայց իսկապէս հէնց շինականի սեպհականութեան զգացման ստատիկութիւնը նրան աւելի զգալի է դարձնում այն ցաւը, որ նա կրում է, երբ որ վերաւորվում

է նոյն զգացումը կամ շինականի անձնաւորութեան սրբազնութիւնը:

Թերեւս հարցնող լինի, սրտեղից գիտենայ հասարակ ժողովուրդը, թէ սեպհականութեան իրաւունքը մի բարոյական պայման է անձնաւորութեան դոյութեան համար: Գիտե՞նա՞յ— ոչ: Բայց զգալ, անշուշտ նա զգում է: Ինչ գիտէ ժողովուրդը թողերի, լեարդի, երկիւմունքի մասին, թէ նրանք ֆիզիքական կենաց պայմաններն են: Ասկայն ամենայն մարդ զգում է թողերի ծակոցը, լեարդի կամ երկիւմունքի պատճառած ցաւը, և լաւ հասկանում է, թէ նրանք ինչ են ազդարարում: Ֆիզիքական ցաւը բաց է անում մեր աչքը և զգուշացնում է, որ ժամանակին հոգանք, ինչ որ պէտք է: Ճիշտ մի և նոյն է նշանակում և բարոյական ցաւը, որ ծագում է դիտաւորեալ անիրաւութիւնից, չոր քմահաճոյքից: Թէպէտ զանազան վիճակի մարդիկ զանազան աստիճանով են զգում բարոյական ցաւը, բայց ոչ ոք նոյն խիստ ամենաբութ մարդը գորիկ չէ անիրաւութիւն զգալու ընդունակութիւնից:

Վեր առնենք վերաւորած պատուի դէպքը և այն դատակարգը, ուր որ աւելի առատկութեամբ զարգացած է արժանապատուութեան զգացումը—զինւորական դատակարգը: Մի սպայ, որ համբերութեամբ տանում է պատուի վերաւորանքը, այնուհետեւ զինւորական շրջանում մնալու հարաւորութիւնը կորցնում է: Ինչո՞ւ: Պատուի պաշտպանութիւնը ամենայն մարդու պարտք է, խիստ ինչո՞ւ հէնց զինւորական դատակարգը նոյն պարտքը կատարելու համար պահանջը այնչափ բարձրացնում է: Արդիհետեւ նա լաւ գիտէ քաջութեամբ անձնապաշտպանութիւնը՝ հէնց նրա հասարակական դրութեան առաջին պայմանն է, թէ այն դատակարգը, որ իր մէջ պարտաւոր է մարմնացնել անձնական քաջատրտութիւնը, այլևս իր անդամների մէջ չի կարող համբերել երկչոտութիւնը՝ առանց ինքն իրան նսեմացնելու: Համեմատեցէք սրա հետ շինականին: Միևնոյն մարդը, որ ամենամեծ կողքով պաշտպանում է իր սեպհականութիւնը, զարմանալի անզգայութեամբ է վերաբերւում իր պատուին: Ինչո՞ւ է բացատրւում այս հանգամանքը. զինւորականի պէս սա էլ խոր զգում է իր կենսական պայմանների յատուկ ուրոյնութիւնը: Դրա կենսական վիճակը հիմնուած է ոչ թէ արիասրտութեան՝ այլ աշխատութեան վրայ, որ և նա յատկապէս պաշտպանում է իր սեպհականութեան մէջ: Շինականի պատիւը աշխատութիւնն ու սեպհականութիւնն է: Մոյլ երկրագործը, եթէ

ձախ ձեռքով է կատարում իր վարուցանքը կամ թեթևամտութեամբ շռայլում է իր վաստակը, նոյնպէս անարգելի է իր գիւղացիներին աչքում, ինչպէս և իւրացիներին մէջ զինւորականք, որ իր պատիւը չի պաշտպանում. այն ինչ ոչ մի գիւղացի միւսին չի դատապարտի, եթէ սա պատուի վիրաւորանք կրելու համար կռիւ կամ դատ չի սկսել, ինչպէս և սպայ միւսին չի մեղադրի, որ սալաւ տնտես չէ: Գիւղացին իր ստացուածքը, զինւորականք իր պատիւը մահու չափ կը պաշտպանեն իրանց բոլոր միջոցներով, որովհետեւ դրանցից իւրաքանչիւրը ուրոյն կերպով է զգում իր բարոյական կենդանութեան օրէնքը:

Այս խմբի մէջ իբրեւ երկրորդ ներկայացուցիչ յիշատակենք վաճառականին: Այն, ինչ որ զինւորականի համար է պատիւը, շինականի համար՝ սեպհականութիւնը, վաճառականի համար վարկն է: Չկորցնել վարկը վաճառականի կենսական խնդիր է. ուստի ով որ նրան մեղադրէ պարտքերի թերի վճարումը՝ աւելի զգալի կերպով կը խոցէ նրան, քան միւսը, որ նրան անձնական վիրաւորանք է հասցնում:

Մենք ուրեմն տեսնում ենք, որ իրաւագրացումը զանազան դատակարգերում տարբեր սաստիկութեամբ է յայտնվում տարբեր հայեցակէտներից: Այս ապացոյց է, որ մարդկանց բարոյական կեանքի մէջ խոր միակողմանիութիւններ են զարգանում, որ կանոնաւոր դատակարարութեամբ և կուլտուրայով պէտք է անշուշտ վերանան: Անգլիացիների մէջ առհասարակ հաւատարմապէս զարգացած է թէ՛ պատուի, թէ՛ սեպհականութեան և թէ՛ վարկի զգացումը, արդեօք նրանք զինւորական, շինական թէ՛ վաճառական են, կամ սոսկ սպասաւոր՝ մի և նոյն է:

Ինչպէս որ դատակարգի և վիճակի առանձին պայմանները հատ հատ իրաւունքներին աւելի բարձր նշանակութիւն են տալիս, ընդհանրապէս կարող են նրանք նաեւ թուլացնել այս կամ այն իրաւագրացումը: Ծառաները չեն կարող արտայայտել պատուի զգացումը այնպէս համարձակութեամբ, ինչպէս հասարակութեան ուրիշ շերտերում կացածները. նրանց դրութիւնը արդէն ինքնին ստորնութիւն է դառնում, որի դէմ մի անհատ ի դուր պիտի կարողանայ ըմբոստանալ, մինչև որ ամբողջ դատակարգը այդպիսի դրութիւնը անմուռնչ տանում է: Եւ իրօք վերջին հարկեր տարուայ ընթացքում սպասաւորներին ինքնաճանաչութիւնը զգալի կերպով բարձրացել է: Պատահական պատճառներով էլ մարդուս իրաւագրացութեան աստիճանը կարող է փոփոխութեան ենթարկուել, այն

գիւղացիներ, որ իր քրտինքի աշխատութիւնը իր օրհնութիւն է համարում, եթէ դայ քաղաքում ապրելու, և սկսէ կամաց կամաց ընտելանալ մի այնպիսի մթնոլորտին, ուր որ լօտօն, վիճակահանողը, բորոսայի խենդութիւնը, խարդախական աղցիները անփորձի դուռնի շշմեցնում, ուր որ հեշտ կերպով ծայրագոյն հարստանալն ու աղքատանալն է տեսնում, նա սկսում է այնուհետեւ աշխատութիւնը անէծք համարել: Այսպէս էլ մի մարդ, եթէ երկար ապրում է գիւղում շինականների հետ՝ սկսում է խնայող դառնալ, իսկ երբ որ գալիս է քաղաք միլիոներների մօտ՝ շռայլանում է:

Մենք ուրեմն տեսնում ենք, որ մէկը առ ոչինչ է համարում պատիւը, միւսը՝ սեպհականութիւնը, երրորդը՝ վարկը, և ամէնքը հանգստաւէտութեան սիրով սկսում են խուսափել իրաւունքի համար մաքառումից: Այս մի անհերքելի իրողութիւն է, որ մեր շուրջը յաճախակի տեսնում ենք: Ինչով բացատրել այս ամէնը, եթէ ոչ երկչոտութեան քաղաքականութեամբ: Այն երկչոտը, որ պատերազմի դաշտից փախչում է, փրկում է հէնց այն բանը, ինչ որ ուրիշները զոհում են, փրկում է իր կեանքը. բայց ինչ դնով, — իր պատուի գնով: Այդ մէկի վատութիւնը կարելի է թէ ոչ ոքին չվնասէ: Բայց եթէ ամէնքն էլ դրա պէս մտածէին և վարուէին, ամբողջ հասարակութեան կորուստը կը պատրաստուէր: Մի և նոյնն է կատարվում ամէն դէպքերում, երբ որ մարդս իր իրաւունքներից հրաժարվում է երկչոտութիւնից:

Ապա ուրեմն, դէն ձգենք այդ սկզբունքը, հանգստութեան կամ սխալ խաղաղութեան բարոյականը, որ երբէք չեն դաւանել այնպիսի ազգեր և անհատներ, որոնց մէջ կենդանի է եղել առողջ իրաւագիտացումը: Նա մի հիւանդական երեոյթ է, շահի և հաշուի նեղ և անարդ հայեացք է: Երբ մերկ քմահաճոյքը ծառանում է և ձեռք է բարձրացնում իրաւունքի սրբութեան վրայ, այլ ևս չպէտք է կարծել, թէ այս տեղ լոկ հասարակ շահի խնդիր է ասպարեղի վրայ, որովհետեւ բացարձակ քմահաճոյքի հարուածը իրաւունքին, անխուսափելի կերպով միշտ հարուած է դառնում նաև անձնաւորութեան վրայ:

Փոյթ չէ, թէ ինչ առարկայ է իրաւունքի նիւթը: Այն առարկան ես ձեռք եմ բերել իմ կամ ինձ ժառանգեցնողի աշխատութեան գնով. նա քրտինք թափած աշխատութեան մի մասն է: Նրա վրայ դրոշմուել է իմ անձնաւորութեան կնիքը. և ով որ ձեռք է բարձրացնում իմ ինչքի վրայ, նա դիպչում է իմ բարոյական անձնաւորութեանը:

Իրաւունքի և անձնաւորութեան այսպիսի սերտ կապակ-

ցութիւնը տալիս է ոչ միայն սեպհականութեան իրաւունքին՝ այլ և ամէն տեսակներին այնքան անգնահատելի արժէք, որ մենք պիտի հոչենք իդէալական արժէք, հակառակ նիւթակա-նի՝ որ ունին սոսկ շահի իրաւունքները: Իրաւունքի այսպիսի իդէալական ըմբռնումը մատչելի է անխտիր ամենայն մար-դուն, — թէ գիտունին և թէ տղէաին, թէ հարստին և թէ աղքատին, թէ վայրենուն և թէ քաղաքակիրթին, որովհետեւ այս իդէալականութիւնը իրաւունքի ամենալոռ էութիւնն է կաղմում, որով և ճանաչվում է իրաւադրացման առողջու-թեան վիճակը: Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հէնց այն իրաւունքը, որը որ շատ անգամ ըստ երեւոյթին եղականութեան, շահի և հաշուի տեսակէանց վեր չի գնում, յանկարծ թողնում է նիւթական աստառը կամ սոսկ օգտի զրգումը, և այդ բանը բոլորովին մոռացութեան տալով, բացառապէս նուիրվում է զաղափարի համար մաքառման:

Ինչն է դառնում այս հրաշքի պատճառը: Ոչ գիտու-թիւնը, ոչ կրթութիւնը, այլ լոկ միայն ցաւի զգացումը: Ցաւը քնութեան այն հաւար տալն է և օգնութեան կոչը, որ բար-ձրագոյն ազազակում է, երբ որ նրան վտանգ է սպառնում: Այդ տեղ է հաստատուած իրաւունքի և արդարութեան զգաց-մունքի բոլոր գաղտնիքը: Ով որ իր մէջ չի զգացել այդ ցաւը, նա չգիտէ, թէ ինչ է իրաւունքը: Դրսի խրատներով իրաւուն-քը չի խօսի մարդու մէջ, այլ թմրած զգացմունքը պէտք է զգաստանայ ներսից: Մեով բանիւ իրաւունքը անձնաւորու-թեան կենսական պայմանն է, իրաւունքի պաշտպանութիւնը իր բարոյական ինքնապաշտպանութիւնն է:

Ցաւի սաստկութեան աստիճանով երեւում է, թէ անձ-նաւորութիւնը ինչ արժէք է տալիս իր վտանգած բարիքին: Սակայն զգալ ցաւը և չգիմել պաշտպանութեան, համբերել և անտարբեր մնալ, — նշանակում է հրաժարուել իրաւադրա-ցումից, որ թերեւ շատ բացառական դէպքերում ներելի լինի, բայց շարունակ վիճակում մեծամեծ վտանգներ կը ստեղծէ բարոյական անձին և հասարակութեան: Իրաւադրացումը պահանջում է համապատասխան գործողութիւն, անգագար վարժութիւն, իսկ ուր որ անգործութիւն է սկսվում, հեռ-զհետէ ցաւն էլ թմրում քնում է և անզգալի է դառնում, սկսվում է բարոյական մեռելութիւնը:

Ամենայն անհատ միակերպ չի զգում բռնաբարութեամբ իրա-ւունքի ցաւը, այլ թոյլ կամ սաստիկ ուժով է կրում այն իր մէջ, նայելով թէ անհատը, իր գոտակարգը, իր ազգը ինչպէս է զգում իրաւունքի նշանակութիւնը, որպէս իր բարոյական

գոյութեան պայման: Վայրենին և քաղաքակիրթը տարբեր
կերպով են արտայայտում իրանց զգացումը, բայց վերջիվերջոյ
լուրած իրաւազգացումը և անձնաւորութեան կենդանութիւնը
արտայայտում է բոլորն կերպով, միւսի մէջ՝ սանձուած
կերպով, այնպէս որ մէկի վայրենութիւնը, հոստութիւնը,
կիրքը, կատաղութիւնը հաւասարաբոլէք է դառնում միւսի
հաստատուն վճռի, խոհական հետապնդութեան, մինչև վախ-
ճանահէտի ընդգիմադրելու կամահորութեան: Ապա թէ ոչ
մենք պէտք է կարծէինք, իբրև թէ անհատներն ու ազգերը
այնչափ իրաւազգացում են կորցնում, որչափ որ կրթութիւն
են վաստակում: Այս գէպը ունոյնպէս ոչինչ նշանակութիւն
չունի հարստութեան և աղքատութեան հակադրութիւնը:
Թէպէտ հարուստն ու աղքատը զանազան չափով են գնահա-
տում իրերը, բայց եթէ իրանց իրաւունքը անարդուի, այդ
զանազանութիւնը ոչնչանում է, որովհետև այնուհետև բանը
ոչ թէ նիւթականին է վերաբերում, այլ իդէալականին: Այս
բանի լաւ ապացոյց է տալիս անգլիական ազգը, ուր որ մեծ
հարստութիւնը չի մեռցրել իրաւազգացումը՝ նոյն իսկ չնչին
բաների նկատմամբ: Յայտնի է, որ ճամբորդ անգլիացին այն-
պիսի յամառութեամբ մաքառում է իրան խաբող պանդո-
կապետներէ և կառապանների դէմ, որ կարծես թէ նա պաշտ-
պանելիս լինի հին Անգլիայի իրաւունքները: Եթէ հարկաւոր
լինի, նա կը յետաձգէ իր ճամբի շարունակութիւնը, ամբողջ
օրեր տեղից չի շարժուի և տաս անգամ աւելի կը ծախսէ,
քան ինչ որ հրաժարովում է խաբեքային վճարել: Օտար ժողո-
վուրդը այդ բանը չի հասկանում և ծաղրում է անգլիացուն:
Նրանք, այդ օտարները, այդպէս չէին վարուի, նրանք կը վա-
խենան անախորժութիւններէ, մի խօսքով՝ նրանք աւելի յօ-
ժարութեամբ կը վճարեն անիրաւութեամբ պահանջածը: Սա-
կայն այն մի բուրլումէջ, որ անգլիացին հրաժարովում է իսկ
օտարը համաձայնում է վճարել, բովանդակած է աւելի բան,
քան կարծում են. նրա մէջն է Անգլիայի և օտար աշխարհի
մի մասը, նրա մէջն է նրանց երկուսի քաղաքական զարգաց-
ման անցեալ դարերը:

Անցնենք մեր երկրորդ գոյութեան, թէ ԻՐԱՆԻԻՆՔԻ ԳՈՐ-
ԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՏԱՊԵՆԴՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴՈՒՍ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՆ Է
ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԵՐՈՒԹԵԱՄԲ:

Ուր որ մարդիկ կ'ոնկրէտ իրաւունքներ են բանեցնում,

այնտեղ հառաքակութեան մէջ այդ իրաւունքները ճանաչող օրէնքներ էլ պէտք է լինին: Այսինքն՝ կօնկրէտի դէմ արտաբաղատ, սուբեկտիւ զէմ օրեկտիւ, անձնականի դէմ հառաքակաց իրաւունքներ կան: Եւ սրանց յարաբերութիւնը փոխադարձ է. եթէ կենդանի է մէկը, կենդանի է միւսը, և ընդհակառակ: Այս այնպէս՝ ինչպէս և արեան շրջանը, — արիւնը սրտից է հոսում և դէպի սիրտն է վերադառնում:

Արդ, եթէ մէկի մէջ իրաւազգացումը այն առտիճան թոյլ է և բթացած, այսինքն նրա մէջ անձնական շահագրգռութիւնը այնպէս հանգել է, որ ծուլութեան է մատնվում, խորշում է կազ և կռուից, փախչում է դատ բանալուց, — այնտեղ իրաւակարգը բացահայտւում է, չի գործադրվում:

Բայց ինչ վնաս դրանից, թերեւ հարցնող լինի, չէ՞ որ այդ բանից տուժում է միայն ինքը իրաւունքի տէրը: Այստեղ պէտք է դարձեալ յիշենք մեր նախկին օրինակը — մէկ հատիկ զինուորի փախուտը պատերազմական դաշտից: Եթէ հազար մարդիկ են մարտնչում, մէկ դատալիք զինուորի անյայտանալը կարելի է թէ աննշմարելի մնայ. բայց եթէ դրօշակից վատաբար երեսը շուռ տան հարիւրները, վատագալիքը դառնայ հաւատարիմների վիճակը, որովհետեւ միայն նրանց վրայ կը մնայ ընդդիմադրութեան բոլոր ծանրութիւնը: Այս պատկերը ճշտիւ ցոյց է տալիս իրաւակարգի իսկութիւնը: Կեանքի մէջ անդադար իրաւունքը մաքառում է անիրաւութեան դէմ, ամբողջ ազգը իր բոլոր անդամներով այդ մաքառումն է մաքառում զանազան կէտերում: Այս այն մաքառումն է, ուր որ ամէնքը պէտք է պինդ կանգնեն և մէջքը մէջքի տան միմեանց, և ուր որ ամենայն փախչող դաւաճանում է բոլորին, դաւաճանում է ընդհանուր գործին, որովհետեւ հակառակորդի ոյժերը բազմապատկուում է, աճեցնելով նրա յանդգնութիւնն ու աներեւոյթիւնը: Եթէ քմահաճոյքն ու ապօրինութիւնը չըբութեամբ գլուխ են բարձրացնում, այդ նշան է, թէ ով որ բարոյապէս կոչուած էր օրէնքը պաշտպանելու, իր սեպուհ պարտականութիւնը չէր կատարել: Ակներեւ է ուրեմն, որ ով իր անձի իրաւունքին հետամուտ է, նա պաշտպանում է քնդհանուր իրաւունքը: Եթէ մէկը չի պահանջում բազարի չափ ու կշռի արդար ճշտութիւնը կամ պատուիրած սահազնի անշեղ գործադրութիւնը, նա այդպիսի վարմունքով վտանգում է օրէնքի իդէալական հեղինակութիւնը:

Բայց ինչ ենք տեսնում մեր շուրջը: Այն սակաւաթիւ մարդկանց ըախտը, որոնք համարձակութիւն են ունենում

օրէնքի կատարումը հետապնդելու, սոսկալի նահատակութիւն է դառնում: Ամէնքից լքուած ու թողնուած, առանց համախոհների և դաշնակիցների, նրանք մէն մէնակ հալածուած են ապօրինութեան դէմ, որ ընդհանուրի վատութեան և երկչոտութեան պատճառով միշտ աւելի չափեր է ընդունում: Իսկ եթէ նրանք այնուհետեւ գէթ այն մտիւթարութիւնն են ստանում իրանց գիտակցութեան մէջ, թէ իրանք հաւատարիմ են մնացել,— այստեղ էլ նրանց հալածել է սկսում շրջապատի ծաղր ու ծանալը: Եթէ ապօրինութիւնը կարողանում է իրաւունքին փախցնել մէջ տեղից, մեղաւորը հէնց ինքը վերջինն է, որ թոյլ տուեց և ասպարիզից նահանջեց առանց մաքառելու: Հանդուրժողը ինքն է մեղաւոր, որ յանդուգնին չի սանձում: Եթէ կշեռքի մէջ դնենք այս երկու բարոյական պատուէրները— «ոչ մի անիրաւութիւն մի գործիր» և «ոչ մի անիրաւութիւն մի հանդուրժիր», այն ժամանակ մենք պէտք է դառնենք, թէ նախապատիւ պատուէր պիտի լինի «մի հանդուրժիր», իսկ երկրորդական՝ «մի գործիր»: Ինչո՞ւ. որովհետեւ զարմանալի կերպով մարդս այնպէս է ստեղծուած, որ նա աւելի զգուշանում է անիրաւութիւն գործելուց, երբ որ հաստատ գիտենայ, որ ինքը շրջապատած է արթուն և աչալուրջ մարդկանցով, որոնց կողմից անշուշտ ընդդիմութիւն կը գտնի, քան եթէ իրան լոկ անգոր խրատներ կարդան: Ապա ուրեմն ամենայն ոք կոչուած է և պարտաւոր է գեանի հետ հաւասարեցնել և ջախջախել քմահաճոյքի և ապօրինութեան ասեղ վիշապի գլուխը, ուր նահամարձակում է երևալ. ամենայն ոք զօրավիգն պիտի լինի օրէնքին. միով բանիւ ամենայն ոք պիտի հանդիսանայ փութեցող իրաւունքի համար յօգուտ հասարակութեան:

Որքան աղնուանում է մարդկային կոչումը, թէ նա պատրաստ պիտի դառնուի իրաւունքի պաշտպանութեան համար: Արդեօք ամենայն ոք այս կոչումը հառկանում է. դժուար թէ: Բայց կեանքը զանազան միջոցներով այդ ազդարարութիւնն է տալիս. մէկին իրաւունքի համար մաքառելու ասպարէզ է կոչում զգաստ շահը, միւրին՝ անիրաւութիւնից պատճառած ցաւը, երրորդին՝ պարտականութեան զգացումը կամ իրաւունքի դադարիարը. բայց դրանք ամէնքը իրար ձեռք են մեկնում ընդհանուր գործի համար, քմահաճոյքը խեղդելու համար:

Այս տեղ մենք հոռանք իրաւունքի համար մաքառման իդէալական դադաթնակէտին: Սկսելով ստորնագոյն շարժառիթը— նիւթական շահից, մենք վեր գնացինք մինչև անձնաւորութեան բարոյական ինքնապահովութեան հայեցակէտը

և, զերջապէս, այն տեսութեան, թէ մարդս պարտական է նպատակել իրաւական դադարիւրի իրադործման՝ յօգուտ հասարակութեան:

Բայց այսքան բարձրութեան կարող է հասնել միայն փիլիսոփան, կառարկեն մեզ. ոչ որ դատ չի սկսում յանուն իրաւանց դադարիւրի, յանուն իդէալականութեան: Այո՛, այդ անունով կարելի է թէ ոչ որ դատարան չի գնում: Սակայն Շայլօկի օրինակով մենք տեսանք, որ այդ մարդու նոյն իսկ վայրենի եսականութիւնը՝ կարծես թէ մի ինչ որ բնազդմամբ՝ կառչում է դադարիւրի այդչափ բարձրութեան, որովհետեւ նա ձեռնառու է համարում իր դատի մէջ խառնել պետութեան կամ Վենետիկի օրէնքը, որպէս իր գաշնակից:

«Այն մի փունտ միտք որ պահանջում եմ՝

Շատ թանկ եմ գնել . . . Եթէ մերժէք ինձ՝

Թող մեր օրէնքին . . .

Ես պահանջում եմ արդար դատաստան»:

Տեսէք, թէ այս ագէտ Շայլօկը ինչպէս ազդու կերպով իր անձնական կորուստը նոյնացնում է պետութեան դադարիւրի կործանման հետ: Նա, այդ հալածուած հրէան, հաւատում է արդարադատութեան, իր սրտի մէջ պահում իրաւունքի անդրդուելի հաւատը, որ ոչ որ չպիտի համարձակուի խախտել, մինչև որ զերջապէս իր աչքերը բացվում են և նա տեսնում է, որ հէնց դատաստանը խախտում է իրաւունքի սրբութիւնը, թէ ինքը մինչև այդ օրը խաբուել է, կարծելով որ օրէնքը սուրբ է:

Շայլօկի դէմքը յիշեցնում է կէս-պատմական, կէս-բանաստեղծական Միխէլ Կօլհապի դէմքը, որ այնպէս գեղեցիկ կերպով նկարագրել է Հայնրիխ Փօն Ալայստը: Շայլօկը դուրս է գնում դատարանից դիտակոր, անգոր, նրա ոյժերը իսպառ ջլատուել են, նա առանց հակառակելու խոնարհում է դատաւորի լճուի առաջ: Այդպէս չի վարվում Միխէլ Կօլհապը: Երբ որ տեսնում է, որ իր իրաւունքը ամենամանարդար կերպով անարդուել է և նրա վերահաստատութեան համար գործ դրած բոլոր օրինաւոր միջոցները սպառուել են, երբ որ տեսնում է, որ իր առջև պալատական չարախորհուրդ դատաստանը արդէն անդառնալի կերպով փակել է իրաւական ճամբան, և արդարադատութիւնը նոյն իսկ իր բարձրագոյն ներկայացուցչին՝ իշխանապետի հետ ի միասին բացարձակ կերպով բռնում է անիրաւութեան կողմը,—նրա մէջ անհուն ցաւի զգացմունքն է բողբոջում իրան հասցրած ծայրագոյն ոճի դէմ:

«Եթէ ինձ վիճակուել է սանակովս լինելու, այն ժամանակ մ'նում է, որ ես շուն լինիմ, և ոչ թէ մարդ»։ Ապա հաստատապէս վճռում է․ «Ուր որ ինձ զլանում է օրէնքի պաշտպանութիւնը, նա ինձ շարժում է անապատական վայրենիքների կողմը և ձեռքիս դնում է մի մահակ, որ նրանով ինքս ինձ պաշտպանեմ»։ Նա խլում է վաճառողը արդարագատութեան ձեռքից ապականուած սուրը և այն ճօճում է այնպիսի ուժով, որ համայն երկրի մէջ տարածվում է սարսափ և սոսկում, փառած պետական կազմը երերվում է իր հիմքերի մէջ, և իշխանը՝ դահի վրայ նստած՝ ահուգողի մէջ է ընկնում։ Սակայն Կօլ-հաազին չի ոգևորում ռիսկալութեան վայրենական զգացմունքը, նա չի դառնում աւազակ և մարդասպան Կարլ Մօօրի պէս, որ «տենչում էր ամբողջ ընտրութեան մէջ հնչեցնել ապստամբութեան փողը, որպէս զի իր կռուին դաշնակից անէ և՛ օդը, և՛ երկիրը, և՛ ծովը բորենածնի դէմ», որ վերաւորուած իրաւազգացմամբ պատերազմ է յայանում ամբողջ մարդկութեան,—այլ ընդհակառակ, նրան մղում է այն բարոյական դադափարը, թէ «ինքը իր բարոյական ոյժերով աշխարհի առաջ պարտականութիւն է ստանում բառնալ իր կրած անիրաւութիւնը մէջ տեղից, իսկ իր համաքաղաքացիներին ապահովացնել ապագայի նոյնօրինակ փորձանքներից»։ Եւ այս դադափարի համար նա զոհում է ամենայն ինչ—իր ընտանիքի երջանկութիւնը, իր բարի անունը, ինչքը, առողջութիւնն ու կեանքը, և նա ոչ թէ աննպատակ, աւերիչ պատերազմ է փոթորկում, այլ մաքառում է միմիայն մեղաւորի և նրա համախոհների դէմ։ Եւ հէնց որ արդարութիւն գտնելու յոյս է ստանում, նա յօժար կամքով վայր է դնում զէնքը․ սակայն կարծես այս մարդու ճակատագիրն էր իր օրինակով մերկացնել, թէ այն ժամանակուայ անիրաւութիւնն ու անազնուութիւնը մինչև որ աստիճան գայթակղութեան հասնելու ընդունակ էր․ իրան շնորհած ազատութեան և ներման հրամանը դրժուեցաւ, և նա իր կեանքի վախճանը դտաւ անարդաւաքինեփողի վրայ։ Սակայն վերջին շունչը տալուց առաջ՝ այնուամենայնիւ նա կարողացաւ իրան վերադարձնել իր իրաւունքը․ և այն մտածմունքը, թէ նա ի դուր չի մաքառել, թէ կարողացել է իրաւունքի յարգութիւնը ճանաչեցնել տալ, թէ իր մարդկային արժանապատուութիւնը անարատ պահպանել է,—նրա սիրտը պնդացնում է մահու երկիւղը յազթահարելու համար․ ապա հաշտուած իր խղճի, աշխարհի և Աստծու հետ, հանդարտ և պատրաստականութեամբ անձնատուր է լինում նա դահճին։

Իրաւամարտնշութեան այս դրամպն յընչափ խրատական է: Մի օրինակաւոր և բարեհամբոյր մարդ, իր ընտանիքը անհունապէս սիրող, մանկական մաքուր հոգւով, յանկարծ այլադերպիւս դառնում է մի ինչ որ Աստուծոյ պատիւի Ատուկա, որ հրով և սրով ոչնչացնում է այն վայրերը, ուր որ թագնուել է իր թշնամին: Նա ինչքոյ այդպէս կերպարանափոխուեցաւ: Հէնց այն յատկութեան պատճառով, որ բարոյական տեսակէտով նրան այնպէս բարձր է հանդիսացնում իր բոլոր հակառակորդներէն, որոնք վերջ ի վերջոյ յաղթութեան տօներ տօնեցին,—այսինքն՝ իրաւունքի բարձր համարումով, իրաւունքի որբութեան հաւատով, խեղճական, առողջ իրաւագրացումով: Նրա դործած ոճիրները ոչ ապաքէն կրկնապատկուած և եւապատկուած ծանրանում են իշխանի, սրա պաշտօնեաների և դատաւորների գլխին, որոնք նրան բռնութեամբ գլորեցին իրաւական ճամբէն սպօրինութեան ճամբան: Որովհետեւ մարդկային ոչ մի անարդարութիւն չի կարող համեմատուիլ այն անարդարութեան հետ, որ դործում է Աստուծոյ կարգուած իշխանութիւնը, երբ որ սա ինքը խախտում է իրաւունքի որբութիւնը: Արդարադատութեան սպանութիւնը—ասա իրաւունքի դէմ մահացու մեղքը: Այսպէս ուրեմն օրէնքի տէրն ու պահապանը օրէնք սպանող է դառնում. դա այն բռնիչն է, որ թունաւորում է հիւանդին, այն խնամակալն է, որ խեղդում է խնամեալին:

Միևեւ իօհնապէս սրտաշարժ օրինակը մեզ պէտք է ցոյց տայ, թէ ինչպէս նոյն խեղ ազնիւ, բարոյական անձը ոճրագործ է դառնում, և երբ որ նա պատժվում է՝ նա իր իրաւագրացութեան նահատակ է դառնում: Այս ապացոյց է, թէ ինչ վտանգ է սպառնում զօրեղ և իդէալապէս ներշնչուած իրաւագրացումին, եթէ արդարադատութեան անկատարութիւնը մերժում է նրան բաւարարութիւն տալու: Այն ժամանակ օրէնքի համար մաքաւումը դառնում է մաքաւում օրէնքի դէմ:

ԻՐԱՒԱԶԳԱՅՄԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ԴՊՐՈՅ. Մենք տեսանք, թէ անհատը ինչպէս է մաքաւում իր իրաւունքի համար: Բայց այսպիսի մաքաւման նշանակութիւնը միայն մասնաւոր կեանքի մէջ չպէտք է փնտռել. ընդհանրապէս նրա սահմանները աւելի հեռու են տարածվում: Ազգը բոլոր անհատների գումարումն է, և ինչպէս որ անհատն է զգում, մտածում և դործում, նոյնպէս է ապրում և ազգը: Եթէ իրաւագրացումը հատ հատ

մարդկանց մէջ բթացած է, վախենում է, անտարբեր է. եթէ նա արձակութիւն չի գտնում իր աղատ և զօրեղ արտայայտութեանց համար, որովհետեւ օրէնքի անարդարութիւնը կամ հաստատութիւնները վատթարութիւնը խոչընդոտ են դառնում. եթէ նա հալածանք է կրում այն տեղ, ուր որ առաւելապէս պաշտպանութիւն և քաջալերութիւն պէտք է ստանար. եթէ նա այսպիսի պարագաներում կամաց կամաց սովորութիւն է ձեռք բերում համբերութեամբ տանել անարդարութիւնը և համոզմունք ստանալ, իբրեւ թէ այս վիճակը այլ ևս անփոփոխելի է իր համար,—միթէ նա այնուհետեւ ընդունակ կը լինի իր ազգի ցաւերն զգալ, երբ որ սրա իրաւունքներն են խախտվում, երբ որ սա զրկվում է քաղաքական ազատութիւնից, կորցնում է սահմանադրութիւնը, կամ արտաքին թշնամու յարձակման է ենթարկվում: Արթէ ով որ վարժուել է իր անձնական իրաւունքները պաշտպանելու՝ յօժարութիւն կուենենայ զոհել իր կեանքը և ինչքը ընդհանուրի օգտի համար: Ոչ, ազգի և պետութեան համար մարտնչողը ոչ այլ որ է, քան ով որ արդէն մարտնչել է անհատական իրաւունքի համար: Մասնաւոր՝ և ոչ թէ պետական իրաւունքն է դառնում իսկական դպրոց քաղաքական դատարարականութեան համար: Յիշենք մաքառելու միշտ պատրաստ անդլիացուն, կրկնում ենք, այն մի բուրլին, որի համար որ նա այնպէս յամառութեամբ կռվում է, Անգլիայի քաղաքական զարգացումն է բոլանդակում իր մէջ: Յաւիտենական ճշմարտութիւն է այն առածը, որ մի ազգի քաղաքական գրութիւնը՝ թէ ներսը և թէ դուրսը՝ միշտ համապատասխան է իր բարոյական զօրութեան: Վիթխարի Զինատանը երբէք փոքրիկ Զուլիգարիայի պատուաւոր իրաւական—միջազգային դիրքը չի ոտնայ:

Այն պետութիւնը, որ ուզում է յարգուած լինել դուրսը և անխախտելի ներսը, նախ և առաջ պիտի հոգայ հասարակաց առողջ իրաւագրացման մասին: Իրաւագրացումը—ամբողջ ծառի արմատն է, եթէ արմատը անպիտանացել է, եթէ քարքարոտ և աւազոտ անապատի մէջ է չորանում այն, մնացածը լոկ միայն ցնորք պիտի համարուի. կը գաջ փոթորիկը, և ամբողջ ծառը արմատով և անառողջ սաղարթով կը խլուի գետնից: Այն ապականիչ աղդեցութիւնը, որ ունենում են անարդար օրէնքներն ու յոռի իրաւական հաստատութիւնները ազգի բարոյական կազմութեան վրայ, ներգործում է գետնի տակից, որ տեղից որ թոյնը տակաւ առ տակաւ բարձրանում է մինչև սաղարթի գալարութիւնը: Եւ բռնակալութիւնը շատ լաւ գիտէ, թէ ո՞ր տեղից սկսէ գոր-

ծել, որպէս զի ծառի տապալումը պատրաստուի. սկզբում նա սաղարթի փարթամութեան չի դիպչում, այլ աւերում է արմատները: Բռնակալութիւնը միշտ սկսում է միջամտել նախ մասնաւոր իրաւունքի մէջ, բռնաբարելով անհատներին: Երբ որ այստեղ իր շարանիւթ գործը աւարտում է, այնուհետև թողնում է, որ ծառը արդէն ինքնին աւերուի: Սրմատները՝ անհատական իրաւունքները պիտո՞ւ պահպանել,—ահա բարոյական կենդանութեան խորհուրդը: Ուստի բռնակալութեան ընդդիմադրել պէտք է հէնց այս կէտում, սրբութեամբ պահպանել անհատական իրաւունքը. և հռովմայեցիք լաւ էին հասկանում, թէ ի՞նչ են անում, երբ որ կանանց կուսութեան և պատուի բռնաբարումը բաւական առիթ համարեցին, որ Զնչէին արքայական իշխանութիւնը և դէցէմբրատը: Բռնակալներն էլ քաջ տեղեակ են, թէ ի՞նչ են անում, երբ որ շինականի ազատ շուկայ ճնշում են տուրքերի և մարտերի միջոցով, քաղաքացիներին դնում են ոստիկանութեան խնամակալութեան ներքոյ, տեղափոխութիւնը դժուարացնում են անցագիր ստանալու արտօնութեամբ, տուրքերը բաշխում են իրանց կամայականութեամբ և այլն: Իսկ թէ մի և նոյն դռները՝ որով մուտք են գործում բռնակալութիւնն ու քմահաճոյքը՝ բաց են նաև արտաքին թշնամու համար,—այս բանը առժամանակ ի հաշիւ չեն առնում: Սակայն բաւական է, որ թըշնամին հասնի, և ահա իմաստունները նոր են սկսում հասկանալ, թէ ժողովրդեան բարոյական ոյժը և իրաւադրացումը կարող էին արդարև վստահելի պատնէշ կազմել արտաքին թշնամու դէմ:

Վատ իրաւակարգի տեսական պայմաններում՝ չի կարող ծաղկել առողջ իրաւազգացումը: Նա բթանում է, ծիւրում է, թառամում է: Իրաւունքի էութիւնն է անարգել գործունէութիւն. ինչպէս որ բոցի համար հարկաւոր է օդի շարժման ազատութիւն, այնպէս էլ իրաւազգացումը վառ կը պահուի գործունէութեան ազատութեամբ. այդ ազատութիւնը լոկ արդէն էլ կամ լոկ սեղմել,—նշանակում է արդէն իսպառ հանգցնել:

Սեդրաք Մանգիբեան.

